

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի  
2020 թվականի մարտի 13-ի թիվ 1 որոշմամբ և հրապարակվում է  
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ «ԳՀԱՊՁԲ-15/16-2020-1-ԴԲԳԳԿ»

.ՀՀ ԱՆ «Դատաբժշկական Գիտագործնական Կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար բժշկական սարքերի և պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳՀԱՊՁԲ-15/16-2020-1-ԴԲԳԳԿ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2020 թվականի մարտի 11-ին և մարտի 12-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2020 թվականի մարտի 13-ին տրամադրված պարզաբանումները

Պարզաբանում առ՝ 11.03.2020թ.

1-ի պարբերության վերաբերյալ՝

www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում սԶԹ. մարտի 10-ին ժ 17:01:43-ին հրապարակված ԳՀԱՊՁԲ-15/16-2020-1-ԴԲԳԳԿ ծածկագրով մրցույթի փաթեթում բացակայում է հրավերի ռուսերեն տեքստը: Ղեկավարվելով կառավարության 10 հոկտեմբերի 2019 թիվ 1422 Զ -ն որոշմամբ՝ խնդրում ենք տրամադրել հրավերի փաթեթը ռուսերեն լեզվով:

Պատասխան՝

ԳՀԱՊՁԲ-15/16-2020-1-ԴԲԳԳԿ ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը հայերեն լեզվով առանձին և ռուսերեն լեզվով առանձին տեղադրված են գնումների պաշտոնական տեղեկագրում: ԳՀԱՊՁԲ-15/16-2020-1-ԴԲԳԳԿ ծածկագրով գնման ընթացակարգի ռուսերեն լեզվով հրավերը տեղադրված է գնումների պաշտոնական տեղեկագրի ռուսերեն լեզվով փաստաթղթերի համար նախատեսված բաժնում:

Չափաբաժին 1(Գազային քրոմատագրաֆիկ մասս սպեկտրաչափական համակարգ)

1. Տեխնիկական բնութագրում նշված «Ոչ նեղ քան 1.5-1090 ԱՕՄՕՄ.» տիրույթի կարևորությունը և նպատակահարմարությունը:  
Ինչպես նաև, նշել այն թմրանյութերը, որոնց զանգվածը հասնում է մինչև 1090 ԱՕՄՕՄ. :
2. Տրամադրել վերոնշյալ սարքի վակուումային համակարգի նկարագիրը:

Պատասխան հարց 1 և 2՝

Պահանջվող ԳՔՄՍ մասսաների տիրույթը բնութագրում է սարքավորման ընտրողականությունը և ապահովում է նյութի մասս-սպեկտրի մասին ինֆորմացիայի հավաքագրումը: Հաշվի առնելով, որ լինելով փորձագիտական և գիտագործական կենտրոն, դատաբժշկական ամենօրյա աշխատանքում հետազոտվում են ոչ թե մաքուր նյութեր, այլ նեխային փոփոխությունների

ենթարկված և կազմափոխված, ինչպես նաև աուտոլիտիկ փոփոխության ենթարկված դիակային նյութեր, որոնք ստացվում են տարբեր կենսանուշներից (արյուն, մեզ, լյարդ՝ լեղապարկով, աղիներ, փափուկ հյուսվածքներ, մաշկ, մկաններ), բացի այդ, վերջիններս առաջացնում են կոմպլեքսներ արյան քայքայված հեմոգլոբինի երկաթի, աղիներում ծծմբաջրածնի, նեխման արդյունքում առաջացած դիակային թույների հետ (պուտրեսցին, կադավերին)՝ մեծացնելով մետաբոլիտի զանգվածը մի քանի անգամ, վերջիններս թույլ չեն տալիս հստակ սահմանել մետաբոլիտի զանգվածը: Ուստի որքան լայն լինի մասսաների տիրույթը, այնքան սարքավորման արդյունավետությունը կլինի բարձր: Իսկ տվյալ պարամետրի՝ «Ոչ նեղ քան 1.5-1090 Ա.Մ.Մ» տիրույթի ընտրությունը պայմանավորված է վերը նշված հանգամանքներից և շուկայում առկա առաջատար արտադրողների ժամանակակից մոդելների տեխնիկական բնութագրերը թույլ են տալիս բավարարել վերոգրյալ պահանջներին և հնարավորություն ընձեռում արտադրող մի քանի կազմակերպություններին մասնակցել նշված գնման գործընթացին:

#### Պատասխան հարց 2՝

Ի պատասխան ձեր հարցի, տեղեկացնում ենք, որ ցանկացած տիպի վակուումային համակարգով սարքավորում, որը համատեղելի կլինի տեխնիկական բնութագրին համապատասխանող սարքավորմանը, մեզ համար ընդունելի կլինի:

#### Չափաբաժին 5 (Լուսային մանրադիտակ)

1. Ի՞նչ նկատի ունեք վերոնշյալ սարքի տեխնիկական բնութագրի 2-րդ կետով՝ հարմարանք, 17-րդ կետով՝ անալիզատոր ասելով:

2. Հստակեցնել, ինչպիսի օբյեկտիվներ են անհրաժեշտ և/կամ նշել խոշորացման չափը:

#### Պատասխան հարց 1՝

Վերոնշյալ սարքի տեխնիկական բնութագրի 2-րդ կետով հարմարանք ասելով, նկատի ունենք կենտրոնացման սարք, կոպիտ/հստակ ֆոկուսիրովկա /устройство наводки на резкость, грубая, точная фокусировка/:

Տեխնիկական բնութագրի 17-րդ կետով անալիզատոր ասելով, նկատի ունենք՝

անալիզատորը ներկայացնում է իրենից մանրադիտակի օպտիկական համակարգի բաղկացուցիչ մասերից մեկը, որը իրականացնում է դիտման դաշտի արտացոլումը համակարգչի մոնիտորի վրա և միաժամանակ մանրադիտակի օկուլյարների վրա, ինչպես նաև թույլ է տալիս կատարել ցանկացած չափումներ՝ մորֆոմետրիա:

#### Պատասխան հարց 2՝

Սարքը նախատեսում է ձեռքային քայլ առ քայլ խոշորացման փոփոխում /пошаговая смена увеличений: 1x, 1.5x, 2x/ Օբյեկտիվների անհրաժեշտ խոշորացման չափերը հետևյալն են

4x/0.10

10x/0.25

40x/0.65

100x/1.25 oil

## Չափաբաժին 11 (Թերմոցիկլեր)

1. սարքի տեխնիկական բնութագրերում նշվածը՝ Բլոկ VeriFlex 25°C , զոնաների միջև 5°C VeriFlex բլոկները հատուկ տեխնոլոգիաներով արտադրվող թերմալ բլոկներ են, որոնք արտադրվում են միայն ThermoFisher Scientific Ընկերության կողմից և հանդիսանում են դասական գրադիենտային տեխնոլոգիայի ալտերնատիվ: Խնդրում ենք նշել, թե դասական գրադիենտային ի՞նչ պարամետրերն են համարվելու բավարար Ձեր հետազոտությունների իրականացման համար:

### Պատասխան

VeriFlex™ տեխնոլոգիան նորարարական մոտեցում է ՊՇՌ համակարգերի համար, որը ունի առնցվազն 6 առանձնացված Peltier բլոկներ, որոնք ապահովում են առավելագույն ճկունություն և հիմնական առավելություններ, ինչպիսիք են՝

- առավել ճշգրիտ վերահսկում՝ ՊՇՌ օպտիմիզացիա՝ յուրաքանչյուր բլոկում կարող է սահմանվել առնվազն 6 տարբեր ջերմաստիճան, ինչը իդեալական է ՊՇՌ- ի օպտիմիզացիայի ճշգրիտ վերահսկման համար:
- Ավելի լավ է, քան գրադիենտ լուծումը՝ պահանջվող բլոկները պահպանում են իրենց ջերմաստիճանի բնութագրերը օպտիմիզացման քայլերի և իզոթերմիկ պայմանների միջև՝ վերացնելով լրացուցիչ քայլերի անհրաժեշտությունը
- Պահանջվող բլոկների մոդուլներն ունեն լրացուցիչ առավելություն գրադիենտային թերմոցիկլերների նկատմամբ, քանի որ պելտյե բլոկերը առանձնացված են, նրանք կարող են սահմանել տարբեր ջերմաստիճանային ծրագրեր մեկ արձանագրությամբ:

Այսինքն պահանջ է հանդիսանում առնվազն 6 բլոկների առկայությունը:

Բացի այդ հրավերի տեխնիկական բնութագիր-զննման ժամանակացույց հավելվածով սահմանված է՝

***\*Եթե տեխնիկական բնութագրում առկա են հղումներ Ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էքսիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կիրառական է «կամ համարժեք» արտահայտությունը:***

Պարզաբանում առ՝ 12.03.2020թ.

Հարցադրում՝

Չափաբաժին 12՝ Իրական ժամանակի ՊՇՌ վերլուծիչ  
Այս չափաբաժնի տեխնիկական բնութագրերը ամբողջովին հիմնված են ThermoFisher Scientific  
ընկերության QuantStudio 7 սարքի վրա: Տեխնիկական բնութագրերից նաև պարզ է, որ սարքը  
նախատեսված է դատաբժշկական փորձաքննությունների համար:  
Ներկայումս միայն երկու արտադրողներ՝ ThermoFisher Scientific-ը և Qiagen Ընկերությունը  
ունեն դատաբժշկական փորձաքննությունների համար սերտիֆիկացված իրական  
ժամանակում ՊՇՌ վերլուծիչ սարքեր: Նշված երկու ընկերությունների սարքերը  
կառուցվածքային առումով տարբեր են՝ ThermoFisher Scientific-ի սարքը պլանշետային է, իսկ  
Qiagen ընկերության սարքը՝ ռոտորային: Սակայն աշխատանքային բոլոր հիմնական  
պարամետրերով երկու սարքերը համադրելի են և սերտիֆիկացված են դատաբժշկական  
կիրառման համար:  
Այսպիսով, խնդրում ենք վերանայել նշված չափաբաժնի տեխնիկական բնութագրերը՝  
ապահովելու համար սերտիֆիկացված երկու սարքերի տեխնիկական բնութագրերի  
համապատասխանելիությունը դրանց:  
Համաձայն սույն մրցույթի 3.5-րդ կետի՝  
Յուրաքայուր որ իրավունք ունի մինչև հրավերում փոփոխությունների կատարման  
համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող  
հանձնաժողովի քարտուղարին ներկայացնել հիմնավորումներ հրավերով սահմանված գնման  
առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և  
խտրականության բացառման պահանջների տեսակետից:

**Պարասխան**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման  
դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար  
անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և  
ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

Հրավերի 12-րդ չափաբաժնով սահմանված Իրական ժամանակի ՊՇՌ վերլուծիչի  
տեխնիկական բնութագրերը ամբողջովին հիմնված է ՀՀ ԱՆ դատաբժշկական գիտագործնական  
կենտրոն ՊՈԱԿ-ին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝  
կարիքին համապատասխան գնման առարկայի ձեռք բերման սկզբունքներով: Սարքի

տեխնիկական բնութագրով սահմանված բոլոր չափորոշիչները անհրաժեշտ են հատուկ դատաբժշկական փորձաքննությունների անցկացման համար, իսկ Ձեր պնդումը սարքավորման միայն մեկ արտադրողի համապատասխանության մասին անհիմն է և կարող է հանդիսանալ որպես ենթադրություն: Հաշվի առնելով ՀՀ ԱՆ Դատաբժշկական Գիտագործնական Կենտրոն ՊՈԱԿ-ին վերապահված լիազորությունների կատարման համար իրական կարիքները խնդրում ենք Ձեզ չխոչնդոտել ՀՀ ԱՆ Դատաբժշկական Գիտագործնական Կենտրոն ՊՈԱԿ-ի բնականոն գործունեությունը և առաջնորդվել հրավերով սահմանված տեխնիկական բնութագրով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող Ռուբեն Եզանյանին:


Հեռախոս՝ 091741410

Էլ. փոստ՝ [formed78@gmail.com](mailto:formed78@gmail.com)

«ԳՀԱՊԶԲ-15/16-2020-1-ԴԲԳԳԿ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի


Հանձնաժողովի

Նախագահ՝



Շ.Գևորգյան

Անդամներ՝



Վ.Աղայան

Ս.Սևոյան



Կ.Ղարիբջանյան

Քարտուղար՝



Ռ.Եզանյան